ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ԱՊՐԻԼԻ 2025 թվականի N 0464-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԱՐԱՔՍ Մ. ԽԱՉՈՒՆՑԻ ՓՈՂՈՑ ,16 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՄՈ ՄՈՍԿՈՎԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԵՎ ԿԱՐԻՆԵ ՄՈՍԿՈՎԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով, 50-րդ և 51-րդ կետերով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> N600-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին , 2-րդ, 4-րդ կետով, հաշվի առնելով ,որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի գյուղ Արաքս,Մ. Խաչունցի փողոց ,16 հողամասում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով , չեն առաջանում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի , այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին , հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2023թ.-ի դեկտեմբերի 21-ի թիվ 10 նիստի 136-Ն որոշումը, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2024թ. նոյեմբերի 29-ի թիվ 131-Ն որոշումը ,Կամո Պողոսյանի լիազորված անձ Նարեկ Պողոսյանի 18.03.2025 թվականի թիվ 1492 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վերականգնել Կամո Մոսկովի Պողոսյանին (ծնվ. 05.05.1966թ.) և Կարինե Մոսկովի Պողոսյանին (ծնվ. 21.09.1974թ.) պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի

մարզի Արմավիր համայնքի գյուղ Արաքս,Մ. Խաչունցի փողոց ,16 հասցեում գտնվող 0.0665 հա օրինական հողամասի վրա 1964 թ. և 1972թ. կառուցված 108,5 քմ մակերեսով բնակելի տան 1972թ. կառուցված 15,8քմ մակերեսով խոհանոցի,1972թ. կառուցված 10,0 քմ մակերեսով սանհանգույցի, 1972թ. կառուցված 23,8 քմ մակերեսով ավտոտնակի , 1972թ. կառուցված 16,8 քմ մակերեսով անասնաշենքի նկատմամբ, իսկ 2023թ. կառուցված 60,7 քմ մակերեսով ծածկոցը համարել ինքնակամ:

3. Ընդունել ի գիտություն , որ

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4.Կամո Մոսկովի Պողոսյանին և Կարինե Մոսկովի Պողոսյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արաքս գյուղում գտնվող գույքին (կադաստրային ծածկագիր 04-016-0018-0018) տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզի Արմավիր համայնք, գյուղ Արաքս, Մ. Խաչունցի փողոց , 16 բնակելի տուն:

6. Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը և ծառայության վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2025թ. ապրիլի 04
ք. Արմավիր